ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

1947 թվի հուլիսի 7—8-ին տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Ընդհանուր ժողովի նստաշրջանը՝ մասնակցությամբ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական ու թղթակից անդամների, Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի հիմնարկների գեկավար ու գիտական աշխատակիցների, կենտրոնական կազմակերպությունների, սովետական ինտելիգենցիայի և մամուլի ներկայացուցիչների։

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՊՐԵԶԻԴԵՆՏ, ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԻՍԿԱԿԱՆ ԱՆԴԱՄ Վ. Հ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ ՆԵՐԱԾԱԿԱՆ ԽՈՍՔԸ

Ընկերներ։ Ակադեմիայի Ընդհանուր ժողովի ներկա նստաշրջանում մենք քննության ենք դնելու այնպիսի հարցեր, որոնք վերաբերում են մի քանի երկու պրոբլեմի, այն է՝ Հարավային Հայաստանի պղնձարդյունաբերության և Արարատյան դաշտավայրի ճահճացած ու աղակալած հողերի օգտագործմանը։

Մեր Ակադեմիայի բաժանմունքների նորեն վերջացած գիտական սեսիաները, որտեղ դրված գեկուցումները նույնպես նվիրված էին վերոհիշյալ պրոբլեմներին, անցան մեծ հետաքրքրությամբ։

Ֆիզիկա-մաթեմատիկական, բնական և տեխնիկական գիտությունների Բաժանմունքի գիտական սեսիայում, որին ես մասնակցում էի, լսվեցին Հայկական ՍՍՌ ԳԱ իսկական անդամ գ. Ն. Պաֆֆլենհոլցի գեկուցումը Հայաստանի հարավային մասի երկրաբանական կառուցվածքի հիմնական գծերի մասին, երկրա-հանքաբանական գիտությունների թեկնածու Ս. Ս. Մկրտչյանի (Երկրաբանական Վարչությունից) գեկուցումը Քաջարանի ու Ագարակի պղնձա-մոլիբդենային հանքավայրերի և նրանց հեռանկարների մասին և հանքա-երկրաբանական գիտությունների թեկնածու Բ. Ս. Վարդապետյանի (Արմցվետոպվեղկայից) գեկուցումը Հարավային Հայաստանի պղնձա-հանքային բազայի (Ղափանի) հանքավայրում) և նրա հեռանկարների մասին։

Այդ գեկուցումներն ակներևաբար ցույց տվին Հայաստանի պղնձա-մոլիբդենային հանքավայրերի արդյունաբերական խոշոր նշանակությունը Սովետական Միության համար։

Այս կապակցությամբ ես ցանկանում եմ կանգ առնել որոշ հարցերի վրա։

Մինչև վերջին ժամանակները գիտնականների շրջանում տիրապետում էր այն համոզումը, թե Հայաստանը երկրաբանական տեսակետից լրիվ ուսումնասիրված է և որոշակի կարելի է ասել, որ նոր հանքեր, արդյունաբերության համար զանազան տեսակի հումքեր հնարավոր չէ հայտնաբերել, այդպիսիները չկան։ Սակայն բավական էր այս ուղղությամբ ձեռք առնել որոշ միջոցառումներ, որպեսզի սատցվեն գրական արդյունքներ։

Այսպիսի սրինակներ Հայաստանում վերջին տարիների ընթացքում եղել են։ Այսպես, որինակ. մեզ մոտ գոյություն ունի ապակու արդյունաբերություն, որի համար անհրաժեշտ հումքը բերվում է հեռավոր վայրերից։ Ենգիր է գրված, թե արդյոք հնարավոր չէ՞ Հայաստանում գտնել համապատասխան հումք այս արդյունաբերության համար։ Երկրաբանները միշտ ասելիս էին որոշակի բացասական պատասխան։ Երկրաբանական Ինստիտուտի երիտասարդ գիտական աշխատողները շատ կարճ ժամանակամիջոցում, համապատասխան հետախուզական աշխատանք կատարելուց հետո, Հայաստանի մի շարք շրջաններում հայտաբերեցին կվարց-պեմզային ավազ, որը հանդիսանում է լավագույն հումքային

բազան ապակու արդյունաբերության համար։ Նախնական փորձերը ցույց տվին, որ այդ [illegible] ստացվում է բարձրորակ ապակի։

Տիրապետող էր նաև այն կարծիքը, թե Հայաստանում չկան երկաթի քիչ թե շատ խոշոր հանքավայրեր։

Երկրաբանական Ինստիտուտի կողմից վերջին տարիներս կատարված լուրջ գիտահետազոտական աշխատանքները, որոնց ընթացքում գործադրվեցին գեոֆիզիկական նոր մեթոդներ, պարզեցին, որ Հայաստանում մենք ունենք երկաթի հանքավայրեր, որոնք կստանան արդյունաբերական նշանակություն։

Խոշոր նշանակություն ունի մեր Երկրաբանական Ինստիտուտի գիտական աշխատակից Հ. Մաղաքյանի կողմից հայտնաբերված պղնձա-մոլիբդենային հանքավայրը Սիսիանի շրջանում—Դաստակերտում։ Երկրաբանական Վարչության կողմից ներկայումս տարվող հետախուզական աշխատանքները ցույց են տալիս, որ այդ հանքավայրերը պարունակում են մոլիբդենի և պղնձի խոշոր պաշարներ։

Այս հայտնաբերումները վկայում են, որ չի կարելի սահմանափակվել երկրաբանական գիտության բնագավառում գոյություն ունեցող տեսություններով, այլ անհրաժեշտ է առաջ մղել երկրաբանական գիտությունը։

Հետաքրքիր անցան նաև Արարատյան դաշտավայրի հողերի օգտագործմանը նվիրված զեկուցումները Գյուղատնտեսական և Բիոլոգիական Գիտությունների Բաժանմունքների միացյալ գիտական սեսիայում։

Ակադեմիայի Ընդհանուր ժողովի ներկա սեսիայում դրված զեկուցումները նույնպես վերաբերում են, ինչպես հիշեցի, Հարավային Հայաստանի պղնձարդյունաբերությանը և Արարատյան դաշտավայրի ճահճացած ու աղակալած հողերի օգտագործման հարցերին։

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Ընդհանուր Ժողովը հուլիսի 7-ին լսեց Հարավային Հայաստանի պղնձա-մոլիբդենային հանքային բազայի պրոբլեմին նվիրված զեկուցումները։

Երկրաբանական Գիտությունների թեկնածու Հ. Մաղաքյանը մանրամասն զեկուցման մեջ նշեց, որ Ռեսպուբլիկայի երկրաբանական կազմակերպությունների ինտենսիվ աշխատանքների շնորհիվ ներկայումս Հարավային Հայաստանը դարձել է ամբողջ Միության պղնձահանքային խոշորագույն բազաներից մեկը։ Զեկուցողը գալիս է այն եզրակացության, որ Հարավային Հայաստանը հանդիսանում է նաև մոլիբդենի խոշորագույն բազա։

Հետախուզական աշխատանքների ժամանակ արվել է ուշադրության արժանի տեսական կարևոր եզրակացություն, որ պղինձն ու մոլիբդենը կապ ունեն ոչ միայն գրանիտների, այլև մի քանի այլ ապարների հետ։

Այնուհետև զեկուցողը մանրամասնորեն կանգ առավ Զանգեզուրի Կանգուր-Ալանգյոզի, Բարկուշատի և Ղափանի շրջանների երկրաբանական բնութագրման վրա։

Վերջում զեկուցողն ընդգծեց, որ անհրաժեշտ է արագացնել Հարավային Հայաստանում պղնձա-մոլիբդենային հանքերի յուրացումը, տեղում կազմակերպելով պղնձի և երկաթ-մոլիբդեն ձուլելու խոշոր գործարաններ։

Ավագ գիտական աշխատակից Գ. Ալլահվերդյանի զեկուցումը նվիրված էր երկրի արտադրողական ուժերի զարգացման ասպարեզում Հայաստանի հարավային շրջանների գունավոր մետալուրգիայի ունեցած դերին։ Զեկուցողը նշեց, որ Հարավային Հայաստանի մետալուրգիայի զարգացման հեռանկարների հարցը պետք է դիտել որպես խոշոր ժողովրդատնտեսական խնդիր։ Հարավային Հայաստանի հանքերի շահագործումը կծառայի որպես արտադրողական ուժերի հզոր զարգացման սկիզբ, կյանքի կկոչի մի շարք նոր արդյունաբերական ձեռնարկություններ, արմատապես կփոխի շրջանի էկոնոմիկան։ Դա խոշոր կոմպլեքսային պրոբլեմ է, որը Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի աշխատանքում պետք է դառնա առաջնակարգ պրոբլեմներից մեկը։

Ընդհանուր Ժողովը, ելնելով այն դերից ու նշանակությունից, որ ստանում են Հայաստանի նորահայտ հանքավայրերը երկրի արդյունաբերության և արտադրողական ուժերի զարգացման համար, որոշեց՝ գտնել անհրաժեշտ և հանձնարարել Նախագահությանը Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Նախագահությանը կից կազմակերպել Հայկական ՍՍՌ-ի արտադրողական ուժերի ուսումնասիրության խորհուրդ։

Հուլիսի 8-ին Ընդհանուր Ժողովը լսեց Արարատյան դաշտավայրի ճահճացած ու աղակալած հողերի յուրացման պրոբլեմին նվիրված զեկուցումներ.

Գյուղատնտեսական գիտությունների թեկնածու Ա. Չիթչյանը հետազոտական ընդարձակ աշխատանքների հիման վրա ավեց Արարատյան դաշտավայրի ճահճացած և աղակալած հողերի բնութագիրը։

Հողերի ճահճացումը, ըստ զեկուցողի, առաջ է գալիս ստորերկրյա ջրերի բարձր մակարդակից և հոսքի բացակայությունից։ Աղակալած հողերը լվանալու և տեղական բարելավող միջոցներ (գիպս և կարբիդային արդյունաբերության թափոններ) կիրառելու փորձերը ավել են դրական արդյունքներ։ Լուծելի աղեր պարունակող ճահճացած հողերը մշակման համապատասխան եղանակների կիրառման և հերկվող շերտն ասիճանաբար խորացնելու միջոցով նույնպես հաջողությամբ ենթարկվում են գյուղատնտեսական յուրացման։

«Արարատյան դաշտավայրի ճահճացած և աղակալած հողերի յուրացման էկոնոմիկան» թեմայի շուրջը զեկուցումով հանդես եկած անտիտական գիտությունների թեկնածու Ս. Երիմյանը նկարագրեց այդ մեծ պրոբլեմի լուծման հիմնական ուրվագծերը, մի պրոբլեմ, որը կոչված է Ռեսպուբլիկայի գյուղատնտեսությունը բարձրացնելու նոր ասպարեզներ։ Նոր հողերում կարելի է ստեղծել խաղող, բամբակ և այլ տեխնիկական կուլտուրաներ, որոնց նշանակությունը մեծ է Ռեսպուբլիկայում։ Այս ընդգրկվող կատարվող գիտական մեծ աշխատանքի կոորդինացման համար Ակադեմիայի Ընդհանուր ժողովը որոշեց նոր հողերի օգտագործման հետ կապված հարցերի կոմպլեքսային մշակումը հանձնել Ակադեմիային կից՝ Հայկական ՍՍՌ-ի արտադրողական ուժերի ուսումնասիրության խորհրդին։

* * *

Ընդհանուր ժողովը հուլիսի 8-ի երեկոյան լսեց Գարմիր բլուրի հնագիտական աշխատանքների զեկուցումը, Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի թղթակից անդամ Գիոտրովսկու հաղորդումը Գարմիր-բլուրի պեղումների ընթացքում հայտաբերված հնագույն իրերի մասին։ Պեղումները, ասում է Բ. Գիոտրովսկին, արդեն ավել են հարուստ նյութեր։ Հետաքրքրական իրեր են հայտաբերվել ուրարտական կառավարչի պալատի ներքին շենքերում։ Վերջերս պալատի նկուղներից մեկում հայտաբերվել է սեպաձև մակագրություն ունեցող մի բրոնզյա սաղավարտ։ Մակագրությունից երևում է, որ այդ սաղավարտը ուրարտական թագավոր Արգիշտի որդի Սարդուրի կողմից (մեր թվականությունից առաջ 8-րդ դարում) նվիրված է եղել Ծալդ աստծուն։ Սաղավարտը զարդարված է ուրարտական մարտակառքերի, հեծյալների և որբատան ծառերի առաջ կանգնած աստվածությունների քանդակված պատկերներով։ Բրոնզյա կապարճի հետ միասին, որը գտնվել է Գարմիր-բլուրում 1940 թվին, այդ սաղավարտը հանդիսանում է ուրարտական արվեստի աչքի ընկնող հուշարձան։ Այդ նույն նկուղում հայտաբերվել են երկաթե սուր դաշույններ, ուլունքներ և ասորեստանյան գլանաձև կնիք։ Բացի պալատի ներքին շենքերի պեղումներից, արշավախումբն ավարտում է ամրոցի գլխավոր դարբասի և նրան կից շենքերի մաքրումը։ Պալատի բոլոր սենյակները կրում են հրդեհի հետքեր, որը տեղի է ունեցել բերդը ավերած սկյութացիների հարձակման ժամանակ։ Պեղումների ժամանակ հայտաբերվել է հրդեհի ժամանակ ոչնչացած ձիերի և խոշոր եղջերավոր անասունների մի քանի կմախք։

Այդ նյութերի և անցյալ տարիներում գտնված հացահատիկի (ցորենի, գարու, կորեկի) մնացորդների մշակումը զգալիորեն լրացնում է մեր գիտելիքները Անդրկովկասում ուրարտական վարչական կենտրոնների տնտեսության վերաբերյալ։

* * *

Ընդհանուր ժողովը հուլիսի 8-ին լսեց Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Ս. Կ. Կարապետյանի դիմումը՝ Ակադեմիայի Նախագահության անդամության պարտականություններից իրեն ազատելու մասին։

Ընդհանուր ժողովը որոշեց

1. Հարգել Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Ս. Կ. Կարապետյանի դիմումը և ազատել նրան Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Նախագահության անդամության պարտականություններից, նկատի ունենալով, որ նա որպես Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի նախագահ ծանրաբեռնված է պետական աշխատանքներով։

2. Նշել, որ ընկ. Ռ. Կ. Կարապետյանը կրական մեծ աշխատանք է կատարել սկզբում որպես ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի Հայկական Ֆիլիալի Նախագահության Նախագահի տեղակալ, ապա որպես Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Նախագահության անդամ և Գիտական Պրոպագանդայի Բյուրոյի Նախագահ։

* * *

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՊՐԵԶԻԴԵՆՏ, ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԻՍԿԱԿԱՆ ԱՆԴԱՄ Վ. Հ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ ԵԶՐԱՓԱԿՄԱՆ ԽՈՍՔԸ

Ընկերներ։ Ակադեմիայի Ընդհանուր ժողովի նստաշրջանում դրված հարցերի քննարկումը վերջացավ։

Ակադեմիայի ֆիզիկա-մաթեմատիկական, բնական և տեխնիկական գիտությունների, Գյուղատնտեսական և Բիոլոգիական Գիտությունների բաժանմունքներում և Ընդհանուր ժողովում քննարկված գիտական հարցերը ցույց տվին, որ մեր գիտնականները վերջին ժամանակներս զգալի աշխատանք են կատարել այդ ուղղությամբ։ Պարզվեց նաև այն, որ դեռևս խոշոր աշխատանքներ կան կատարելու այդ ասպարեզում։

Հայկական ՍՍՌ-ի արտադրողական ուժերի ուսումնասիրության նոր կազմակերպվելիք խորհուրդն այդ ուղղությամբ կկատարի լուրջ աշխատանքներ։

Ի տարբերություն անցյալ նստաշրջաններից, այս նստաշրջանում քննության ենթարկվեցին գիտական զեկուցումներ՝ նվիրված միայն երկու պրոբլեմի։ Նման պրակտիկան ճիշտ է և իրեն լրիվ արդարացնում է։ Մենք կաշխատենք հետագայում էլ մեր Ակադեմիայի ընդհանուր ժողովի նստաշրջաններում նույն կարգով զեկուցումներ դնել տեսական ու գործնական նշանակություն ունեցող պրոբլեմների շուրջը։

Թույլ տվեք Ակադեմիայի Ընդհանուր ժողովի նստաշրջանը հայտարարել փակված.